

## ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ ՄՏԱԴԻՐ ԵՆ ԱՂՕԹԵԼ ԱՆԻՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԷՆ ՆԵՐՍ



Անիի Մայր տաճարը

Թուրք ազգայնականները, ի պատասխան Աղթամարի մէջ Սեպտեմբեր 19-ին տեղի ունեցած պատարագին, յառաջիկայ Ուրբաթ օրը խմբային աղօթք (նամազ) կատարելու նպատակով կը ծրագրեն հաւաքուելու Անիի Մայր տաճարը:

Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Ժամանակ» թերթի խմբագիր Արա Գոշունեան «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է որ, եկեղեցի-

էն ներս խմբային աղօթքի արտօնութիւն ստանալու համար թուրք ազգայնականները արդէն իսկ դիմած են Կարսի նահանգապետարան: Մօտ 40 տեղական կազմակերպութիւններու ղեկավարներու հաւաքի ժամանակ «Ազգայնական շարժում» կուսակցութեան Կարսի կառուցցի առաջնորդը յայտարարած է որ, աղօթքը տեղի պիտի

Շարք էջ 7

## ԴԱՎՈՒԹՕՂՈՒ ԿԸ ԶԳՈՒՇԱՑՆԷ ՀԱՅՈՒԹԵԱՆ՝ «ԴՈՆԵՐԸ ՄԻ՛ ՓԱԿԷՔ, ՄԻ՛ ՄԵՂԱԴԻԷՔ ԵՒ ԼՍԵՑԷՔ»

Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարար Ահմէթ Դավութօղլու երկու օրոց ընդհանուր հարցազրույցի ընթացքին ներս անդրադարձած է Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան եւ յատկապէս հայ-թրքական յարաբերութիւններու ներկայ իրավիճակին:

Յիշեցնելով 2007-ին Ջուրջիոյ մէջ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ տեղի ունեցած բանակցութիւններու մասին, Դավութօղլու յայտարարած է. «Ի վերջոյ անցեալ տարի Հայաստանի հետ ստորագրեցինք Արձանագրութիւնները, որոնք դեռ ուժի մէջ են»:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը յայտարարած է որ, հայ եւ թուրք ժողովուրդները գոյակցած են դարերէ ի վեր, բայց չենք ըսեր, թէ երկու ազգերու միջեւ որեւէ խնդիր չկայ:

«Այս երկու ազգերը սկսած են գոյակցել 4-րդ դարէն ի վեր: Այս երկու ազգերու միջեւ ցեղային խտրականութիւն չէք կրնար տեսնել», ըսած է Թուրք դիւանագետը ու աւելցուցած, որ կարելի չէ նմանութիւն տեսնել եւրոպային մէջ հրեաներուն հետ պատահածներուն եւ հայերու միջեւ:

Անդրադառնալով 1915-ին տեղի ունեցած իրադարձութիւններուն եւ գանոնք որակելով

որպէս «ողբերգութիւն»՝ Դավութօղլու ըսած է. «Այո, մենք ցաւ ապրած ենք եւ պատրաստ ենք կիսել այդ ցաւը: Սակայն եթէ ոմանք մեզ կը մեղադրեն Յեղասպանութիւն իրականացնելու եւ 100 տարի շարունակ այն ժխտելու մէջ, ապա թոյլ տուէք հարցնել, ի՞նչ տեղի ունեցած են այդ տարիներուն Կովկասի եւ Պալքաններու մէջ ապրող թուրքերու հետ: Ինչո՞ւ Թուրքիոյ մէջ կան պոստիպցիներ, վրացիներ, ալպաններ, եւ աւելի շատ են, քան իրենց երկրին մէջ: Որովհետեւ անոնք ալ նոյն բանները ապրելու պատճառով ստիպուած են գաղթել Թուրքիա: Միայն թէ մենք պալքանեան ազգերուն չենք մեղադրեր, մենք այսօր Ռուսաստանին չենք մեղադրեր աբխազներու, չէչէններու դէմ ճնշումներ գործադրելու մէջ»:

Յայտնելով, որ իրենք հայերու հետ պատրաստ են քննարկել 1915-ի իրադարձութիւնները, Դավութօղլու խօսքը ուղած է Երեւանին ու սփիւռքի հայութեան ու ըսած է. «Մի պատմէք միայն այդ իրադարձութեան մէկ կողմի պատմութիւնը: Լսեցէք երկու կողմի պատմութիւնները: Սակայն դուները մի՛ փակէք, մի՛ մեղադրէք եւ միեւնոյն ժամանակ լսեցէ՛ք»:

## «ՀԱՅԱՍՏԱՆ ԶԻ ԿՐՆԱՐ ԱՃԻԼ՝ ՄԻԱՅՆ ՇԷՆՔԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՎ»

Արժոյթի Միջազգային Հիմնադրամը (ԱՄՀ) վերանայելով 2010-ի Հայաստանի տնտեսութեան աճի վերաբերեալ իր կանխատեսումը եկած է այն եզրակացութեան, որ տնտեսութեան զարգացման աստիճանը 4 տոկոսը պիտի չանցնի: Նախկին կանխատեսումներու համաձայն կը սպասուէր 5 տոկոսի աճ:

«Մենք վերանայած ենք կանխատեսումը, բան մը որ բացառապէս պայմանաւորուած է գիւղատնտեսութեան ոլորտին ներս արձանագրուած լուրջ ցնցումներու հետեւանքներով», - Սեպտեմբեր 29-ին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտարարած է Արժոյթի Միջազգային Հիմնադրամի հայաստանեան ներկայացուցիչ Կիերմօ Տոլոսա: Ան կարծիք յայտնած է, որ տարուայ ընթացքին 4 տոկոս աճը կարելի կ'ըլլայ իրականացնել, եթէ գիւղատնտեսութեան վիճակը բարելաւուած արձանագրէ:

Ըստ Տոլոսայի, Հայաստանի կառավարութիւնը պէտք է միջոցներ գործադրէ, որոնք կը նպաստեն եւ կը խրախուսեն արտահա-

Շարք էջ 7

## ԲԱԶՄԱՐԱԶԱՐ ՀԱՅՈՒԴԻՆԵՐ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 19Դ ՏԱՐԵԴԱՐԶԻ ԺՈՂՈՎՈՐԴԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Նախորդ տարիներու նման այս տարի եւս Կլենտէյլի «Վերտուկօ Բարք» զբօսայգին տօնական բացառիկ կերպարանք ստացած էր, նշելու համար Հայաստանի անկախութեան 19րդ տարեդարձը: Արդարեւ, Կիրակի Սեպտեմբերի 26ին, ձեռնարկի կազմակերպիչ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ընկերային յանձնախումբը՝ ոչ մէկ ճիգ չէր խնայած համաժողովրդային 12րդ այս աւանդական հաւաքն անցնելու արդիւնաւէտ եւ հաճելի:

Առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ Կլենտէյլէն եւ շրջակայ քաղաքներէն, ամէն տարիքի հայեր, սկսան խումբ առ խումբ ժամանել դալարագեղ եւ ծառագարդ զբօսայգին: Տասնեակ մը տաղաւարներ սկսած էին ցուցադրել տեղական եւ Հայաստանեան բազմազան արտադրութիւններ, արուեստի գործեր, ուտելիքներ, ըմպելիներ եւ այլն: Ուշագրաւ էին մանուկներու հաճելի ժամանցին համար լարուած վրաններն ու այլ յարմարութիւնները: Հակառակ արտակարգ եւ մրցանիչ հաստատած անտանելի տաք օդին՝ բազմահազար հայորդիներ, ներկայ եղան փառատօնին, վայելելով տօնական մթնոլորտը:

Օրուան համակրելի հանդիսավարն էր հեռատեսիլի ծանօթ



հաղորդավար Ստեփան Յովակիմեան: Ան իր բացման խօսքին մէջ, ողջունեց Հայաստանի անկախութեան 19րդ տարեդարձը զայն նկատեց հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մեծագոյն յաղթանակներէն մին:

Անուհետեւ գործադրութեան դրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը: Ամերիկեան ծովուծին պատկանող Փաստիւնայի 23րդ վաշտի գինուորներու կողմէ կատարուեցաւ դրօշակի արարողութիւնը: Ապա Կլենտէյլ քաղաքի «High

School»-ի երգչախումբը յաջողութեամբ կատարեց ԱՄՆ-ի եւ Հայաստանի քայլերգները, ղեկավարութեամբ Կլէյսա Շէշտօն-Ուիլիամսի:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ ABC հեռատեսիլի 7րդ կայանի խօսնակ Սուպա Ռաֆիւտարան: Ան նշեց որ բովանդակ աշխարհի հայեր տեսան 600 տարիներու իրենց երազի իրականութիւնը՝ պատուով եւ արեամբ կերտուած անկախու-

Շարք էջ 7





ԼՈՒՐԵՐ

ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆ. «ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑՆ Է»

Արցախի նախագահ Բակո Սահակեանն ուկրաինական թերթի հետ հարցազրույցում խօսել է բանակցային գործընթացից՝ նշելով, որ օրակարգում միջազգային հանրութեան կողմից Արցախի ճանաչման հարցն է:

«Արցախն Հայաստանի հետ միացնելու խնդիր այս պահին չկա, քանի որ սա Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առկա հակամարտութիւնն է: Այս խնդիրն առաջացել է Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ, իսկ Բաքուին յաջողուեց ներքաշել դրա մէջ Հայաստանին: Հայաստանը, դեռ չճանաչելով ԼՂՀ-ն, ցոյց է տալիս պատասխանատուութեան բարձր աստիճան՝ պաշտօնական երեւանը չի ցանկանում խանգարել բանակցային գործընթացին», - նշել է Արցախի նախագահը:

Լրագրողի այն հարցին, թէ կա՞նք արդեօք հնարաւորութիւն, որ պէսզի Բակո Սահակեանը բանակցային սեղանի շուրջ նստի Ալիեւի հետ, ԼՂՀ նախագահը պատասխանել է. «Նմանատիպ առաջարկ մեր կողմից եղել է: Ես առաջարկել եմ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին կազմակերպել Ադրբեջանի նախագահի հետ հանդիպում: Բայց Բաքուի ոչ կառուցողական դիրքորոշման պատ-

ճառով նրանք այս պահին չեն կարող ապահովել նմանատիպ հանդիպում: Այնտեղ ասում են, որ «նման պետութիւն գոյութիւն չունի եւ այն Ադրբեջանի մասն է: Մենք պատրաստ ենք բանակցել ԼՂ հայկական համայնքի հետ»: Մենք տամենակ անգամներ հանդէս ենք եկել տարաբնոյթ առաջարկներով, օրինակ՝ հանել դիպուկահարներին շփման գծից: Բայց մեր իւրաքանչիւր նախաձեռնութիւն հիսթերիայով է ընկալուում: Այս պահին միջին լարուածութիւն է պահպանուում՝ ոչ պատերազմ եւ ոչ էլ խաղաղութիւն»:

Ուկրաինացի լրագրողը հարցնում՝ ինչ որ փոխդիվանների պատրաստ էք, որին ի պատասխան, Արցախի Հանրապետութեան նախագահը պատասխանում է.

«Մենք խորապէս համոզուած ենք, որ այս խնդիրը պէտք է լուծուի փոխադարձ զիջումների հիման: Բայց մենք պէտք է հնարաւորութիւն ունենանք խօսել փոխզիջումների մասին, իսկ բանակցային գործընթացն ընթանում է առանց Ղարաբաղի մասնակցութեան: Արցախի անկախութիւնն ու անվտանգութիւնը չեն կարող փոխզիջումների մէջ լինել»:

HayNews.am

«ՊՈԼՍԱՀԱՅԵՐԸ ՊԱՏԱՆԴ ԵՆ ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ»

Ստամբուլից նոր վերադարձած թուրքագէտ Արտակ Շաքարեանն ասուլիսի ժամանակ ասել է, որ ստամբուլ լաւագոյն կերպով համար անհասկանալի էր, թէ Սուրբ Խաչ եկեղեցու գմբէթին խաչ չտեղադրելու հանգամանքն ինչու է այդքան մեծ վրդովմունքի առարկայ դարձել Հայաստանում:

Ըստ թուրքագէտի՝ ստամբուլ լաւագոյնի նման պահուածքը բնական է, քանի որ վերջիններս պատանդ են թուրքիայում: Շաքարեանի խօսքերով՝ ստամբուլ լաւագոյնը գիտակցում է, որ եթէ ընդվզի, յաջորդ օրը կը փակեն դպրոցներ, եկեղեցիներ:

«Պէտք է նրանց այս պահուածքը դիտել որպէս հայի դաւաճանութիւն, պէտք է հասկանալ նրանց վիճակը», - նշել է թուրքագէտը:

Արտակ Շաքարեանը նաեւ ներկայացրել է Սուրբ Խաչում խաչի չտեղադրելու վերաբերեալ ստամբուլ լաւագոյնի կարծիքը. «Իրենք



Թուրքագէտ Արտակ Շաքարեան

ասում են, որ խաչ չտեղադրելը ճիշդ որոշում էր թուրքիայի կողմից. եթէ խաչը տեղադրուէր, ապա վան կը մեկնէր հայերի մեծ բազմութիւն, որին կառավարելը դժուար կը լինէր, իսկ թուրքիան չէր կամենայ, որ իր շուրջ փչանայ»:

HayNews.am

ԼՈՆԴՈՆՈՒՄ ՀԱԿԱՅԿԱԿԱՆ ԳԻՐՔ Է ՏՊԱԳՐՈՒԵԼ

Լոնդոնում հանրութեանն է ներկայացուել կանադացի «գրող» Սքոթ Թէյլորի (Scott Taylor) «Փոխհամաձայնութեան չեղող տարբերութիւններ: Հայաստան, Թուրքիա եւ Ադրբեջան» ("Unreconciled Differences: Turkey, Armenia and Azerbaijan") գիրքը, յայտնում է թուրքական Cihan գործակալութիւնը:

Գրքի շնորհանդէսը կայացել է Միացեալ Թագաւորութիւնում Ադրբեջանի դեսպանատանը, որին մասնակցել է նաեւ Թուրքիայի դեսպանը: Գրքի հեղինակը, ով նախկինում եղել է գիտնորական, մօտ 4 տարի է ծախել այն գրելու համար՝ այդ ընթացքում մի քանի անգամ այցելելով տար-

ածաշրջան: Թուրքիայի դեսպանն իր հերթին նշել է, որ «այս գիրքը շատ կարեւոր է միջազգային հանրութեանը ներկայացնելու Ադրբեջանի ներկայիս վիճակը, որի տարածքների մի մասը գտնուում են «օկուպացիայի» տակ»:

Նկատենք, որ կանադացի «գրողը» յայտնի է իր հակահայկեցուածքով եւ գտնուում է Թուրքիայի եւ Ադրբեջանի «Տօնաւորութեան ներքոյ»: Գրքի օբիեկտիւութեան մասին, ինչպէս հասկացանք, կարելի է անգամ չխօսել՝ այն վերջից վար լցուած է հակահայկական յայտարարութիւններով եւ թրքամէտ գեղումներով:

HayNews.am

ԲԱՐԱՔ ՕԲԱՄԱՆ ԵՒ ԻԼՀԱՍ ԱԼԻԵՎԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԽՆԴԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒՄԸ



Իլիւմ Ալիեւ եւ Բարաք Օբամա

Սեպտեմբեր 24-ին, Նիւ Եորքում՝ ՄԱԿ-ի գլխաւոր վեհաժողովի շրջանակներում, Միացեալ Նահանգների նախագահ Բարաք Օբաման հանդիպել է Ադրբեջանի առաջնորդ Իլհամ Ալիեւին:

Սպիտակ տան տարածած պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, հանդիպմանը Բարաք Օբաման վերահաստատել է Միացեալ Նահանգների լիակատար աջակցութիւնը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում դարաբաղեան հարցի կարգաւորմանը եւ ընդգծել շփման գծում հրադադարը պահպանելու կարեւորութիւնը:

Պաշտօնական վաշինգտոնի հաղորդմամբ, ԱՄՆ նախագահը նաեւ նշել է հակամարտութեան խաղաղ կարգաւորումը գտնելու անհրաժեշտութիւնը եւ ընդգծել, որ այն պէտք է հիմնուած լինի Հելսինքեան սկզբունքների՝ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականութեան, իրաւահաւասարու-

թեան եւ ժողովուրդների ինքնորոշման վրայ:

Իլհամ Ալիեւի հետ առաջին դէպ առ դէպ հանդիպմանը ԱՄՆ նախագահը չի շրջանցել նաեւ Ադրբեջանում խօսքի ազատութեան եւ մարդու իրաւունքների պաշտպանութեան հետ կապուած խնդիրները: Սպիտակ տան հաղորդագրութեան համաձայն, մասնաւորապէս, Բարաք Օբաման կոչ է արել Իլհամ Ալիեւին բարեփոխումներ իրականացնել ժողովրդավարութեան ուղղութեամբ, այդ թւում՝ ազատ արձակել ընդդիմադիր հայեացքներ ունեցող, 2009 թուականից ձերբակալուած երկու բլոգերներին՝ Ադնան Հաջիգադէին եւ Էմին Միլիին:

«Նախագահ Օբաման նշել է, որ ուժեղ ժողովրդավարական կառուցները նպաստում են Ադրբեջանում տնտեսական աճի ու կայունութեան ամրապնդմանը», - փաստում է Սպիտակ տան հաղորդագրութիւնը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԱՀԱՆՁԵԼ Է

Կանադական ամենահեղինակաւոր վերլուծական կենտրոններից մէկի՝ Fraser Institute-ի գնահատմամբ, տնտեսական ազատութիւնների մակարդակով Հայաստանն այսօր աշխարհի 141 պետութիւնների թւում զբաղեցնում է 50-րդ տեղը՝ նախորդ տարուայ 48-րդ հորիզոնականի փոխարէն:

Տնտեսական ազատութիւնների մակարդակով Հայաստանը զգալիօրէն զիջում է վրաստանին, որը այս տարի կտրուկ բարելաւել է իր ցուցանիշները. 2009 թուականի համեմատ վրաստանը բարձրացել է մօտ 20 կէտով՝ յայտնուելով կանադացի վերլուծաբանների հրապարակած ցուցակի 23-րդ հորիզոնականում:

Այդուհանդերձ, Հայաստանը տարածաշրջանի պետութիւններից զիջում է միայն վրաստանին՝ բաւական առաջ անցնելով միւս բոլոր հարեւաններից. ըստ կանադացի փորձագէտների՝ տնտեսական ազատութիւնների առումով Թուրքիան այսօր 74-րդ, Ադրբեջանը՝ 93-րդ, իսկ Իրանը՝ 107-րդ հորիզոնականում:

ԱՊՀ-ի առաջատար պետութիւններից Ռուսաստանը գտնուում է 84-րդ, իսկ Ուկրաինան՝ 127-րդ հորիզոնականում:

Հետազոտութեան հեղինակները աշխարհի պետութիւնների ազգային տնտեսութիւնները դիտարկել են մի շարք տեսանկիւններից. դրանք բաժանելով 5 պայմանական խմբերի՝ տնտեսական կեանքին պետութեան միջամտութեան չափ, տնտեսական գործունէութեան իրականացման ապահովում, դրամավարկային քաղաքականութիւն, արտաքին առեւտուր եւ գործարար կեանքի պետական կարգաւորում:

Կանադացի վերլուծաբանները բաւական դրական են գնահատում Հայաստանեան իշխանութիւնների կողմից իրականացուող դրամավարկային քաղաքականութիւնը՝ մասնաւորապէս սղաճի մակարդակն ու արտարժոյթով ազատօրէն բանկային հաշուհաճմարներ բացելու հնարաւորութիւնը:

Միւս ոլորտներում Հայաստանի վիճակն աւելի մտահոգիչ է: «Տնտեսական գործունէութեան ընթացքում ամենալուրջ խնդիրները շարունակուում են մնալ անկողմնակալ եւ անկախ դատարանների բացակայութիւնն ու բիզնէսի ընթացքում ծագող յաւելեալ ծախսերը, նախ եւ առաջ՝ կաշառքները», - նշուած է գեկոյցում:

# ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅ ՈՐԲՈՒԿՆԵՐՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՅՈՒՇԱԿՈՐՈՂԻ ԲԱՑՈՒՄ ԱՆԹՈՒՐԱ ԼԻԲԱՆԱՆ



Անթուրայի Հայ որբուկներու գերեզմանները

Աւելի քան հինգ տարիներ անցած են այն օրէն երբ Պրն. Միսաք Քէլէշեան յայտնաբերեց Անթուրայի Սէն ձոզէֆ Գոլէճի գերեզմանին մէջ թաղուած, ցեղապանութեան վերապրած եւ Լիբանանի մէջ թրքացման ծրագրին ենթարկուած Հայ որբուկներու դիակները: Միսաք Քէլէշեան կոչ ուղղած էր բոլորին որ այդ տեղ յուշակոթող մը գետեղուի ի յիշատակ Անթուրայի անմեղ Հայ որբուկներուն:

Այսօր, 5 տարիներ ետք, անոր կոչը ստացած է արժանավայել պատասխան:

Չորեքշաբթի, 22 Սեպտեմբերի 2010ին Լիբանանի Քըսրուանի շրջանի Անթուրայի Սէն ձոզէֆ Գոլէճին մէջ, Չուք Միքայէլ, տեղի ունեցաւ Հայ որբուկներու գերեզմանի յուշակոթողի բացումը: Անթուրայի որբանոցին մէջ մահացած Հայ որբերու աճիւնները ի վերջոյ ամփոփուեցան պատշաճ կերպով եւ անոնց յիշատակը յաւերժացնող յուշակոթողը ամրացուեցաւ: Այս գործի իրականացման ձեռնամուխ եղաւ Խաչատուրեան ընտանիքը: Խաչքարի եւ տապանաքարի բացման արարողութիւնը կատարեց Տիկ. Գոհար Խաչատուրեան եւ բոլոր Հայ մայրերու անունով ան ըսաւ. «Հայ Մայրը իր ազգային պարտականութեան հաւատարիմ պիտի մնայ»:

Յուշակոթողի բացումէն ետք խօսք առին Պրն. Միսաք Քէլէշեան, Անթուրայի Սէն ձոզէֆ Գոլէճի տնօրէն Հայր Անթուան Նաքատ,

Շահէ Խաչատուրեան, Գոհար Համոյթի ղեղարուեստական ղեկավար Սեպուհ Աբգարեան, Լորի Քէլէշեան եւ Արմէն Քէլէշեան, որմէ ետք տեղի ունեցաւ պատշաճ հոգեհանգստեան արարողութիւն Գոհար խումբի մասնակցութեամբ,



Գոհար Խաչատուրեան եւ Միսաք Քէլէշեան բուկներու գերեզմանի յուշակոթողի բացումին

որ եղաւ Հայ որբերու եւ որբուհիներու հոգիներու խաղաղութեան համահայկական աղօթքի արտայայտիչը:

Հայապահպանման եւ ազգապահպանման ուղիին մէջ, այս խիստ կարեւոր իրագործումով, կրկին անգամ Միսաք Քէլէշեան, կողքին ունենալով իր տիկինը՝ Մայրան եւ երեք զաւակները, Հայ ազգային եւ համաշխարհային պատմութեան մէջ կարեւոր հետք մը ձգեց եւ իր սուրբ նպատակին հասաւ, դառնալով ամէն մէկ Հայ սրտի ձայնը եւ արձագանգելով աշխարհով մէկ:

Բոլորին վարձքը կատար:

Համադրեց՝ ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԳՈՐԱՐ ՀԱՄԵՅԹԻ ԽՄԲԱՎԱՐ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԱՐԳԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբեր 24, 25, եւ 26-ին, ԳՈՐԱՐ համոյթը իր ելոյթներով հանդէս եկաւ լիբանանահայութեան առջեւ: Համոյթի խմբավարն է Սեպուհ Աբգարեան, որ տարիներ շարունակ դասաւանդած է Կիպրոսի Մելքոնեան Կրթական Հաստատութեան ներս:

Այս առթիւ, կը ներկայացնենք ռատիօ «Սեւան»ի «Մշակոյթի Անկիւն» յայտագրի կատարած հարցազրոյցը՝ մայեսթրօ Սեպուհ Ավգարեանին հետ:

Հ. Ինչպէ՞ս ծնունդ առաւ ԳՈՐԱՐ համոյթը, որո՞նք են այս ծրագրի ետին կանգնողները, եւ ինչու՞ ԳՈՐԱՐ անունը:

Պ. Մեծագոյն երախտապարտ զգացումը ունիմ Յարութի Խաչատուրեանին հանդէպ, որ մեր հայրն է, մեր հովանաւորը: Պատահմամբ եղաւ այս բոլորը, երբ ես ամէն օր «Հիլթըն» պանդոկի լողաւազանը կ'երթայի լողալու համար, մարզական կեանքս շարունակելու, եւ օրին մէկը, երբ դուրս կ'ուղղուէի, հանդիպեցայ Սեւակ եւ Սարօ Սերոբեաններուն, որոնք իմ աշակերտներս էին Մելքոնեանէն, եւ որոնց երկար ատենէ չէի տեսած: Ինձ կանչեցին, ես ալ գացի ու նստեցայ: Բազկաթոռին խորը նստած անձնաւորութիւն մը կար, որուն չճանչցայ առաջին անգամ թէ՛ն: Աշակերտները հետաքրքրուեցան Մելքոնեանի դրուագներուն մասին, ես ալ նշեցի, որ հանգստեան կոչուած եմ, եւ անձնական զբաղումներով կը զբաղիմ: Ապա, լուռ նստած անձը, որ Յարութի Խաչատուրեանն էր, հարց տուաւ թէ՛ ինչ կը մտածեմ, եթէ առաջարկէ որ Հայաստան երթամ եւ Հայ Ֆիլհարմոնիայի օրփեստրը ղեկավարեմ, 250 անձերէ բաղկացած խումբ մը:

Սկիզբը կարծեցի թէ կատակ մըն է, սակայն երբ Պրն. Խաչատուրեան նշեց, որ յաջորդ օրը առաւօտեան պատասխան կ'ուզէ, զգացի թէ լուրջ է ծրագիրը: Անմիջապէս ընդունեցի առաջարկը, եւ Հայաստան ուղղուեցայ: Երեք փորձերով ամբողջ օրփեստրը ղեկավարեցի, եւ միայն Յարութի Խաչատուրեանն էր որ ներկայ գտնուեցաւ: Ապա, առաջարկեց որ Օփերայի մէջ նոյն յայտագիրը ներկայացնենք, եւ անոր ներկայ ըլլան մտաւորականներ, արուեստագէտներ, բարեգործական համերգով, որովհետեւ ժողովուրդը նիւթական ալ չունէր: 1999 թուականն էր:

Մենք թերթերով հասարակութեան իրազեկեցինք, եւ օփերայի ամբողջ սրահը լեցուեցաւ: Յաջող ելոյթ մը ունեցանք: Ես ապա վերադարձայ Կիպրոս: Երեք շաբաթ ետք, նամակ մը եկաւ Կիւմրիէն, եւ այդտեղի երաժշտանոցը, որ դարձեալ Յարութի Խաչատուրեանի եւ իր մօր ու եղբայրներուն կարգադրութեամբ է որ կը գործէ,



ինձ կ'առաջարկէր Կիւմրի մեկնել, եւ կազմել նոր երգչախումբ մը՝ անդամները Կիւմրիի շրջանէն: 250 անձ ներկայացաւ, որոնցմէ 120-ը ընդունեցի, եւ սկսանք աշխատանքները:

Ոմանք գիտէին նօթագրութիւն, ուրիշներ ոչ, սակայն ունէին հնչող ձայն: Երբ մտանք 2000 թուականի դռները, եւ նկատեցի որ երգչախումբին կարողականութիւնը նրբացաւ, առաջարկեցի Պրն. Յարութի Խաչատուրեանին որ ունենանք օրփեստրա մը, եւ բոլորը կոչուին Յարութի Խաչատուրեանի մօր՝ Տիկ. Գոհար Խաչատուրեանի անունով: Տարիներու ընթացքին խումբը մարզուեցաւ: Երբ 2002 մտանք, Յարութի Խաչատուրեան առաջարկեց խումբը արտասահման տանիլ: Չորս ամսուայ մէջ պատրաստեցինք մեր 2002-ի յայտագիրը: Որովհետեւ Կիպրոսէն էի, առաջին քայլ որպէս՝ որոշեցինք Կիպրոս երթալ, ապա Լիբանան, ուր «Պիէլլ» մէջ ելոյթ ունեցանք: Սքանչելի փորձառութիւն մըն էր, որ նաեւ տեսահոլովակի ձեւով արտագրուեցաւ, աշխարհով մէկ տարածուեցաւ:

Հ. Այսօր քանի՞ անհատներ կը բաղկանայ ԳՈՐԱՐ-ը, եւ ու՞ր կը գտնուի կեդրոնը:

Պ. Միշտ Կիւմրիի մէջ հաստատուած ենք, եւ մեծամասնութիւնը Կիւմրիէն են: Կան անձեր որոնք Երեւանէն կու գան: Այժմ ԳՈՐԱՐ-ը կը բաղկանայ 125 անձերէ: Սակայն պարախումբով, մշակատակը ընտղներով, մեներգիչներով, եւ աշխատանքին օգտակար դարձող անձերով, մենք կը հանինք 185 հոգիի:

Հ. Երբ տեղի կ'ունենան փորձերը:

Պ. Փորձերը ամէն օր են: Երբեմն մասնակի փորձեր կը կատարենք, երբեմն հաւաքական, որոնք Ուրբաթ եւ Շաբաթ օրերուն են, իսկ միայն երգչախումբը երկուշաբթի եւ երեքշաբթի օրերուն, նուազախումբը՝ Չորեքշաբթի եւ Հինգշաբթի, իսկ Ուրբաթ եւ Շաբաթ՝ հաւաքական: Երբ հայրը ներկայ է, մեր աշխատանքին հունձքը ներկայացնելու համար

Շաբ.ք էջ 18



## ԿԻՐԱԿԻ, 31 ԲՈԿՏԵՄԲԵՐ 2010

11-րդ տարեկան Telethon «Քաջ Նապար»ի գլխաւորութեամբ:  
Նուիրուած «Հայաստանի ծնողագուրկ հաշմանդամ երեխաների  
Սր. Ծնունդի և դպրոցաշինական ֆոնտին» 380 AMGA կայանով՝  
**818-239-6880, 818-606-2070, 818-246-0125**  
www.fourourkids99@gmail.com. **ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ԶԻԱԶԱԶԵԻԼ:**

# ԿՐՕՆԱՓՈՒՆ ՀԱՅԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ ԵՐՐՈՊԱՅՈՒՄ

## ՌՈՒԲԷՆ ՄԵԼՔՐՈՆԵԱՆ

Բռնի իսլամացուած հայերի եւ նրանց սերունդների խնդրի ուսումնասիրութեանը գուգահեռ ի յայտ են գալիս նրանց աշխարհագրական սփռուածութեանը վերաբերող նոր եւ հետաքրքիր մանրամասներ: Մասնաւորապէս՝ Թուրքիայի կրօնափոխ հայերի թեմայի ուշագրաւ եւ, միեւնոյն ժամանակ, իւրայատուկ մասն է կազմում ներկայումս Եւրոպայում բնակուող իսլամացուած հայերի սերունդների հարցը: Յայտնի է, որ ընդհանրապէս կրօնափոխ հայութեան ներկայիս վիճակի մասին տուեալները, փաստերը շատ քիչ են, եւ եթէ վերջին տարիներին Թուրքիայի իսլամացուած հայերի մասին որոշ տուեալներ ի յայտ են գալիս, ապա Եւրոպայում բնակուողների վերաբերեալ նիւթերն անհամեմատ աւելի քիչ են: Միայն վերջերս օտարազգի եւ հայ որոշ հեղինակներ սկսել են անդրադառնալ այս խնդրին եւ փոխանցել որոշ տեղեկութիւններ, որոնք, առաւելապէս, ունեն նկարագրական բնոյթ:

Նախ, անդրադառնանք կրօնափոխ հայերի Եւրոպա տեղափոխուելու խնդրին եւ փաստենք, որ 1950-ական թուականների վերջերին Եւրոպայում ու մասնաւորապէս՝ Գերմանիայում առաջանում է էթան աշխատուծի կարիք եւ այդ պատճառով մի շարք երկրների հետ կնքուած են արտագնայ աշխատուծի մասին պայմանագրեր: Թուրքիայի եւ Գերմանիայի միջեւ նմանատիպ պայմանագիր է կնքուած 1961թ., որից յետոյ սկիզբ է առնում Թուրքիայի հարգարտոր բնակիչներին արտագաղթելու դէպքի Գերմանիա, իսկ յետագայում՝ նաեւ Եւրոպայի այլ երկրներ: Հենց այս արտագաղթի հետեւանքով է այսօր Եւրոպայում ձեւաւորուել մի քանի միլիոնի համող թրքական համայնքը: Համաձայն որոշ տուեալների, Թուրքիայից արտագաղթողների մէջ եղել են նաեւ հայեր, ընդ որում՝ ինչպէս բացայայտ քրիստոնեայ, այնպէս էլ կրօնափոխ կամ ծպտեալ: Կրօնափոխ հայերը եւ նրանց սերունդները մի քանի տասնամեակների ընթացքում գաղթել եւ հաստատուել են Գերմանիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Շուեդիայի, Ֆրանսայի տարբեր բնակավայրերում, եւ այսօր նշեալ երկրներում կան կրօնափոխ հայութեան սերունդներից կազմուած համայնքներ կամ համայնքա-

տիպ կառուցներ: Տեղափոխուելով աշխարհագրական նոր միջավայր՝ կրօնափոխ հայերի եւ նրանց սերունդների շրջանում սկիզբ են առել որոշակի գործընթացներ ու երեւոյթներ, որոնք կապուած են իրական ինքնութեանը վերադառնալու հետ: Եւրոպայեան կրօնափոխ հայութեան շրջանում ամենատարածուած եւ ուշագրաւ երեւոյթը, անշուշտ, կրօնադարձութիւնն է՝ քրիստոնէութեան վերընդունումը: Եւ այսօր Եւրոպայի կրօնափոխ հայերի մէջ աւուրեալներին վերադարձածների թիւը բաւական մեծ է: Ինչպէս փոխանցում են մի շարք աղբիւրներ, կրօնադարձութեան, արմատների որոնման գործընթացը տարբեր զարգացումներ է ունեցել եւ այսօր էլ շարունակուած է: Մասնաւորապէս՝ քրիստոնէութիւն աւելի արագ վերընդունել են ծպտեալ հայերը, որոնք ամէն բարենպաստ առիթ օգտագործել են աւուրեալներին վերադառնալու համար եւ Եւրոպա տեղափոխուելուց կարճ ժամանակ անց կամ անմիջապէս յետոյ ընդունել են քրիստոնէութիւն: «Յոյս» երկաթաթափերի վերջին համարներից մէկում Թամար Գեւորեանը մէջբերում է մի պատմութիւն, համաձայն որի՝ Թուրքիայից Գերմանիա տեղափոխուած արտաքուստ մուսուլման երեւացող մի խումբ մարդիկ հենց մաքատանն ինքնաբացայայտում են եւ պաշտօնաշին ներկայացնում ոչ թէ անձնագրերում առկայ մուսուլմանական, այլ՝ հայկական անուններ: Այս ուշագրաւ օրինակը ցոյց է տալիս տասնամեակներ թաքցրած իրական ինքնութեանը վերադառնալու ցանկութիւնը: Ինչպէս նշում է նոյն աղբիւրը, վերոյիշեալ հայերն այսօր Գերմանիայում համայնք եւ եկեղեցի ունեն: Տարբեր աղբիւրներ փաստում են, որ այսօր Եւրոպայում բնակուող եւ քրիստոնէութիւն վերընդունած հայերը կրօնի հարցում շատ աւելի ջերմեռանդ են: Այստեղ կայ նաեւ հոգեբանական կողմ, այն է՝ շրջապատին ապացուցել հայկականութեան հանդէպ իրենց հաւատարմութիւնը: Իրական ինքնութեանը վերադարձած հայերի շրջանում նկատուած են նաեւ որոշ հոգեբանական եւ հոգեկան խնդիրներ: Ոմանք անգամ բուժման կուրսեր են անցել հոգեբան-բժիշկների մօտ. վերջիններիս ախտորոշումը եղել է այն, որ կրօնադարձ հայերի հոգեվիճակի մէջ կարեւոր եւ որո-

շիչ դեր են ունեցել Հայոց ցեղասպանութեան տրամադրիկ յիշողութիւնները, տասնամեակներով ապրած վախի ու սպառնալիքի մթնոլորտը եւ այն, որ շարունակ թաքցրել են իրական ինքնութիւնը: Այսօր Գերմանիայի տարբեր քաղաքներում կան կրօնադարձ հայերի խմբեր, որոնց մի մասը ինտեգրուած է տեղի այլ հայերի հետ, իսկ մի մասը խորթութեան հանդիպելով հին համայնքի կողմից՝ շարունակում է վարել մեկուսի կենսակերպ եւ համայնքային կեանքից դուրս է մնում: Գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Եալչընը բազմաթիւ փաստեր է ներկայացնում Եւրոպայում ապրող կրօնափոխ հայերի մասին եւ մեզ ուղարկած իր նամակում նշում է. «Ես Գերմանիայում մարդկանց գիտեմ, որոնք առաջացած տարիքում անգամ վերընդունում են քրիստոնէութիւն եւ մկրտում»: Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեթթեանը եւս անդրադառնում է խնդրին եւ որոշ հետաքրքիր փաստեր ներկայացնում: Գերմանիայի Վիսբադեն քաղաքում, ըստ Համօ Մոսկոֆեանի, կայ կրօնափոխ հայերի ռեստորան-հաւաքատեղի, որ կոչուած է «Անի»: Յիշեալ քաղաքում ապրում են նաեւ կրօնադարձուած մի խումբ հայեր, որոնցից, օրինակ՝ Նուրեդդին Գիւնդեանը, որ վերանուանուել է Սիմոն, պնդում է, թէ սերում է մեծ ֆիզիկի Հրայր Դժոխքի տոհմից: Պելզիպում բնակուող կրօնադարձ հայերի մասին հետաքրքրական յօդուածով է հանդէս եկել Դաւիթ Զէնեանը, համաձայն որի՝ հիմնականում Շրընաքից եւ Սիլոպից գաղթած քրտացած-քրտախօս հայերն այսօր վերադառնալով իրենց ինքնութեանը՝ կազմում են տեղի առաքելական համայնքի հիմքը եւ հանդէս գալիս որպէս ջերմեռանդ քրիստոնեաներ: Նրանց երեխաները սովորում են հայերէն, եւ այդ միջոցով մայրենիին են սկսում տիրապետել նաեւ ծնողները: Բրիւսելի քրտացած կամ քրտախօս հայերի համայնքի կարեւոր դէմքերից եւ հիմնադիրներից Մեսրոպ Աֆշարը, պատմելով հայրենիքում իրենց վիճակի մասին, նշում է. «Վախը եւ ճնշուածութեան զգացումը մեր մշտական ուղեկիցներն էին: Ծնումները շատ էին, բայց մեր մեծերը մշտապէս յիշեցնում էին մեզ, որ չնայած լեզուի կորստին՝ մենք հայ ենք»: Աֆշարը Թուրքիայում իրենց կենսակերպի մասին որոշ մանրամասներ է պատ-

մում, որոնցից պարզ է դառնում, որ նրանք ծպտեալ հայեր են եղել եւ գաղտնի շարունակել են քրիստոնէական սովորոյթները, ասորի քահանայի միջոցով գաղտնի մկրտել իրենց երեխաներին, կատարել հարսանեաց, թաղման քրիստոնէական արարողութիւններ: Ինչպէս շատ վայրերում, այնպէս էլ Շրընաքում վերապրած ծպտեալ հայերն ունեցել են կրկնակի անձնանուններ՝ տան եւ դրսի համար: Մեսրոպ Աֆշարն այս մասին պատմում է. «Մերոնց շրջապատում մենք հայեր էինք: Մկրտելիս մեր երեխաներին տալիս էինք հայկական անուններ, օրինակ՝ Սարգիս, Դաւիթ, Նուպար, Գէորգ եւ Սարօ, բայց արտաքին միջավայրում մենք նման էինք քաղաքի մնացած բնակիչներին: Մենք կրում էինք քրտական անձնանուններ, օրինակ՝ Էուզ, Եալիք, Օդեմիր, Բիրջին»:

Աւելորդ չէ նշել, որ հայերի այս խմբի փրկութեան եւ հայկականութեան վերադարձի մէջ եւս լուրջ դեր է ունեցել Պոլսոյ պատրիարք, լուսահոգի Շնորհք Արք. Գալուստեանը, ում ջանքերով 1960-ականների կէսերին հայութեան այս բեկորները նախ սկսել են Շրընաքից եւ Սիլոպից տեղափոխուել Ստամպուլ, իսկ այնուհետեւ՝ 1980-ականներին, Պելզիպ, Ֆրանսա, Հոլանդիա:

Ինչպէս վերը նշուեց, այսօր կրօնադարձուած հայերի խմբեր կան նաեւ Շուեդիայում, որոնցից է ծնունդով Ատանայից Սուլէյման Ֆարուքը, որ, գտնելով իր իրական ինքնութիւնը, ընդունել է քրիստոնէութիւն եւ փոխել անունը՝ դառնալով Հայկ Արամեան: Նա մէկն է բազմահազար ուծացած հայերից, որոնք ապրում են թուրքի կամ քրտի արտաքին ինքնութեան քողի տակ: Դեռ մանկուց կասկածներ ունենալով իր ինքնութեան շուրջ՝ նա որոնել է իր արմատները եւ 1983թ. Դամասկոսում տեղի հայկական եկեղեցում մկրտուել, իսկ երկու տարի անց՝ 1985թ. տեղափոխուել ու հաստատուել է Շուեդիայում: Իր ինքնութեան մասին նա նշում է. «Ներքուստ ես միշտ զգում էի, որ ուրիշ եմ: Ես կարող էի քուրտ մնալ, բայց ես այլ կերպ որոշեցի»: Հաստատուելով Ստոքհոլմում՝ Հայկ Արամեանն ամուսնացել է այնտեղ բնակուող տիարբեքիրցի հայուհու հետ, իսկ իր երկու զաւակներին անուանել Մասիս եւ Անի: Երեխաները, ի դէպ, սովորել եւ տիրապետում են հայերէնին: Յատկապէս ուշագրաւ է, որ սկուսններին վերադարձած Հայկ

Շաք-ը էջ 19


**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---



**A.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաճնոս է

Coverage & Protection should be on the top of your priority list.



**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

# ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ՀԱՅՈՐԴԻՆԵՐ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 19ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ



## Շարունակուած էջ 1-էն

**Թիւնը:**  
Փառասօնի կազմակերպիչ ՆՄՄՄ-ի ընկերային յանձնախումբի անունով ելոյթ ունեցաւ Հէրի Իւնէլ, շեշտելով անկախութեան նուաճման կարեւորութիւնը:

Հայ ժողովուրդի մեծ տօնը ողջունելով շնորհաւորական ելոյթներով հանդէս եկան Կլեմէնտէլ քաղաքի քաղաքապետ Արա Նաճարեան, ԱՄՆ-ի երկրորդ մեծագոյն քաղաք Լոս Անձելըսի քաղաքապետական խորհուրդի առաջին հայ անդամը՝ Փոլ Գրիգորեան, Գալիֆորնիոյ 43րդ ընտրաշրջանի երեսփոխան Մայք Կաթօ (որ այս աւիթով հռչակագիր մը փոխանցեց կազմակերպիչ յանձնախումբին),

ԱՄՆ-ի Գոնկրէսի անդամ Ատամ Շիֆ եւ Փասատինայի Քաղաքապետարանի անդամութեան յառաջիկայ ընտրութեանց թեկնածու՝ Խաչիկ Շահինեան:

Առանձնաշատուկ վայելք մը եղաւ յայտադրի գեղարուեստական բաժինը: Յաջորդաբար ելոյթներ ունեցան Մէլի Թիւն մանկավարժուհիի խմբակը, «Լիլլիա» հայկական պարի համոյթը, Արծուն Պապախանեանն իր տուտուկի եւ զուռնայի խմբակով, Չութակահար՝ Ալէնը, աճպարար՝ Ժօրա Սարգիսեանը, Ինչպէս նաեւ երգիչներ Սամուէլ Սահակեանը, Սազօն, Յարութ Յակոբեանը, Առնօն, Վաչէ Յակոբեանը, Սաշ եւ Գաբրիէլ (անդլերէն), Արա Մարտիրոսեանը եւ Գաբօ Վիանօն (Պոլիվիայէն՝ ապա-

ներէն-հայերէն): Բոլորի ելոյթներն ալ ժողովուրդին կողմէ ընդունուեցան մեծ խանդավառութեամբ, արժանանալով ջերմ ծափահարութիւններու:

Ուշ երեկոցեան ժողովուրդը զբօսալիքին տուն վերադարձաւ հայրենական յիշարժան օրուան մը բարձր տրամադրութիւն մը ապրած ըլլալու գոհունակութեամբ:

Այս առթիւ գնահատելի է Նոր Սերունդ Մշակութային Միութեան ժրջան վարչութիւնն ու յարակից

երիտասարդական եւ կանանց օժանդակ մարմինները, ձեռնարկի հովանաւորներն ու աջակիցները, որոնք ամէն ճիգ ի գործ դրին յաջողութեամբ պսակելու այս հայրենանուէր եւ շնորհակալ աշխատանքը:

Կը յուսանք առաւել յաջողութեամբ պսակուած տեսնել յառաջիկայ տարուան փառասօնը, որ կը զուգադիպի Հայաստանի անկախութեան 20րդ տարեդարձին:

## ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՄՏԱԴԻՐ ԵՆ

### Շարունակուած էջ 1-էն

ունենայ հայ - թրքական սահմանի մօտ, Անիի աւերակներուն մէջ գտնուող Մայր տաճարէն ներս:

Թրքական մամուլը այս կապակցութեամբ կը տեղեկացնէ որ, աղօթքին պիտի մասնակցի նաեւ «Ազգայնական շարժում» կուսակցութեան ղեկավար Դեւլէթ Բահէլին: «Կուսակցապետի՝ նամագին մասնակցութեան մասին տեղեկութիւնները պաշտօնապէս դեռ չեն հաստատուած», - Հայկական «Ակօս» թերթի խմբագրութեան ըսած են «Ազգայնական շարժում» կուսակցութեան կենտրոնական գրասենեակի պատասխանատուները:

«Այսօր լոյս տեսած գրեթէ բոլոր թրքական թերթերը անդրադարձած են ազգայնականներու այս նախաձեռնութեան», - ըսած է Արա Գոչունեան: Թերթերը այս առթիւ ներկայացուցած են թուրքիոյ մշակոյթի նախարար Էրթուր-

րուլ Գիւնայի տեսակէտը: Նախարարը ըսած է, որ եթէ աղօթքը վերածուի հաւաքական ցոյցի, ապա այդ կը հակասէ թուրքիոյ Սահմանադրութեան եւ կուսակցութիւններու մասին օրէնքին: «Բաց եթէ «Ազգայնական շարժում» կուսակցութեան ղեկավարը որպէս անհատ քաղաքացի որոշէ աղօթք կատարել այդտեղ, ապա պետութիւնը կը յարգէ անոր այդ իրաւունքը», - ըսած է թուրք նախարարը

Անդրադառնալով թուրք ազգայնականներու այս ծրագրի շարժառիթներուն, Արա Գոչունեան ըսած է. - «Սահմանադրական հանրաքուէէն յետոյ «Ազգայնական շարժում» կուսակցութեան ղեկավարը զգալիօրէն թուլացել են: Ըստ երեւոյթին, ազգայնական շարժումներու հիման վրայ կուսակցութիւնը կը փորձէ վերագտնել իր քուէները ու վերականգնել իր ներուժը»:

## ՀԱՅԱՍՏԱՆ ԶԻ ԿՐՆԱՐ ԱԾԻԼ»

### Շարունակուած էջ 1-էն

նումը, այլ ոչ թէ վնասէ անոր. - «Հայաստանի նման փոքր երկիրը զարգանալու համար պէտք է կեդրոնանայ արտաքին շուկաներ ապրանքներ եւ ծառայութիւններ

արտահանելու վրայ»: «Հայաստան չի կրնար աճել միայն ներքին շուկայի վրայ ապրանքներ վաճառելով եւ շէնքեր կառուցելով», - ըսած է Արժոյթի Միջազգային Հիմնադրամի հայաստանեան ներկայացուցիչը:

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

# ՆՈՒՆԷ

## ԱՆԱՀԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Նա սովորական կին չէ: Թէեւ բոլորին նման ուտում է: Բոլորի նման քայլում, քնում եւ արթնանում: Բայց նրա ընդերքում կան ուրիշ հոսանքներ: Ուրիշ ուժեր: Արեւներ կան նրա մէջ, որ միշտ լոյս են տալիս եւ ձեռքում են անգամ ամպեր թանձր շերտերը, որոնք փորձում են մթազնել իր անյաղթահարելի ճառագայթների ընթացքն ու լուսաւորութիւնը:

Գրել մի կնոջ, մի մօր, մի հայուհու արուեստի մասին, այն էլ ասմունքի արուեստի մասին, դժուարին եւ չափազանց պատասխանատու ինչի՞ր է, քանզի ժամանակակից աշխարհում եւ մասնաւորապէս ասմունքի աշխարհում շատ քչերն են հանդէս գալիս, որովհետեւ այն

թախծոտ աչքերը: Հայութեան կարօտ ու տիեզերքների առեղծուածներին սեւեռուած իր արցունքաշաղ աչքերը:

Արդարեւ, նա ունի իր առանձին դիմագիծը, իր մոլորակը: Երկիրն ու երկիրն քր միացնել զետի, ձորերը սարերը, հովիկներն ու դաշտերը խառնում է իրար եւ միաձուլում է աստղերին: Հոգին, ինչպէս բոլոր իսկական արուեստագէտներինը, մերթ փոթորկոտ է ու մերթ խաղաղ, մերթ լուռ ու մերթ անզուսպ: Նրա հոգին ճիշդ ունի: Բողոք ունի այնպիսի ծովի նման: Բողոք ունի Աստուծոյ դէմ: Ինչպէս, բանաստեղծի բողոքներն անգամ առ Աստուած իբրեւ արթիք է լսում, այնպէս էլ Նունէ մեծ ասմունքողի բողոքն էլ աղօթքի պէս է հնչում: Նա ապրում է արուեստագէտի պէս ու աշխարհին նայում է իր սեփական աչքերով: Ներքին բռնկումների այն փիլիսոփայութեամբ, որ միայն իրեն է

յատուկ: Որովհետեւ, համապատասխանում է իր խառնուածքին ու նկարագրային բոլոր յատկանիշներին:

Սիրելի Նունէ, քեզ հետ հանդիպելը, ծանօթանալն ու մտերմանալը բարեբախտութիւն եմ համարում: Ինչո՞ւ չհամարեմ, երբ դու քո վաստակով, քո ծանրակշիռ շնորհներով, քո մարդկային բարձր յատկանիշներով, քո եռանդով ու ընկերասիրութեամբ նուաճել ես ոչ միայն իմ համակրանքն ու յարգանքը, այլ եւ կ'ասէի բոլորին, առանց նկատի ունենալու ոչ մի կուսակցական եւ քաղաքական եւ այլ հանգամանքներ: Դու բարձր որակի, ասմունքող ես: Ասմունքիդ մէջ համ ու հոտ կայ: Ունես նաեւ գրելու վարպետութիւն: Գիտես զնահատել արժանաւորին: Լաւը վատից զանազանում ես: Միտքը սթափ է: Քո ճակատը բարձր է ու մաքուր: Լեզուդ հիւժեղ է: Հոգիդ միշտ աստղերի մօտ է: Նրանց հետ մտերմութիւն է անում: Նրանց հետ սեղան նստում: Նրանց հետ քնում ու արթնանում:

Հայ գիր ու գրականութեան արժէքների պահպաններից մէկն ես այս օտար ափերում:

Դու վարպետօրէն ես կատարում մեր մեծ վարպետների ստեղծագործութիւնները:

Ով ինչ ուզում է ասի: Ես քեզ պարզապէս քրոջ պէս սիրում եմ: Քեզ սիրում եմ իբրեւ մարդ: Իբրեւ մայր: Իբրեւ կին ու իբրեւ մէկը, որ իր ընդերքերում խտացնում է ազնութեան, հայրենասիրութեան ու ընկերասիրութեան ամենաբարձր յատկանիշները:

Դու երեւոյթ ես: Պարզապէս շնորհաւորում եմ տարեդարձդ: 50-ամեակդ: Տարեդարձ որ արժեւորել է հարկաւոր: Ծնորհաւորանքներս ուզում եմ վերջացնել իմ սիրած բանաստեղծներից մէկի Մատթէոս Զարիֆեանի հանճարեղ սողերով:

Եթէ Աստուած ես ըլլայի, Օ, անկասկած, Ձայն (քեզ) կ'ընէի Աստուածուհի:



շատ դժուար արուեստ է, չիշողութեան վերարտադրելու կարողութեան հետ է կապուած: Ասմունքողը աւելի լաւ է խօսում բանաստեղծի ստեղծած, արարած երկերի հետ, քան ինքը բանաստեղծը:

Ուստի արուեստագէտի մասին գրելիս պէտք է թափանցել նրա էութեան մէջ, խօսել նրա լեզուով, նրան տեսնել արուեստի հմայքով ու նրա խոհերի յոյզերի ու ներաշխարհային բոլոր երանգների արտայայտչականութեամբ:

Նա այստեղ է, քայլում է խաղաղ ու կրիանոսի ափերով սուզւում է նրա խորախորհուրդ խորհուրդների մէջ որոնելու իր չգտած ու կորցրած երազները: Որոնում է իր էութիւնը, որ միշտ անհասկանալի մնաց իրեն: Մնաց այն բարձունքը, որի վրայ թափառեցին իր

Armenian Athletic Association  
**H.M.M. LOS ANGELES**  
 Presents *Extravaganza*  
**Casino**  
 Roulette  
 Black Jack  
 No Limit  
 Texas Hold 'em  
**CASH PRIZES!**  
 \$35 Admission Includes:  
 Playing Chips  
 Dinner Buffet  
 & Drink  
 Have a **BLAST!**  
 and  
 Support a Good Cause  
**October 9, 2010**  
 The AEBU CENTER  
 Doors Open 7:00 PM  
 1060 N Allen Ave., Pasadena, CA 91104  
 RSVP call LA HOMENMEN at (213)-537-9030

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ) ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**



# Massis Weekly

Volume 30, No. 35

Saturday, OCTOBER 02, 2010

## Armenian Independence Day Festival in Glendale



GLENDALE, CA -- Organized by the Nor Serount (New Generation) Cultural Association, the Gaidz Youth Organization and the Armenian Athletic Association (Homenmen), with co-sponsorship by the City of Glendale, the 19th anniversary of Armenia's independence was celebrated at Glendale's Verdugo Park on Sunday, September 26, 2010.

Ever since its inception, the annual Armenian Independence Day Festival has grown into a wildly popular, multicultural tradition, showcasing Armenian music, art, and cuisine, celebrating a spirit of community and shared history. This year, the tradition continued with thousands attending the event dedicated to the 17th anniversary of Armenia's Independence Day.

The event commenced by the U.S. Marines Color Guard with the U.S. and Armenian national anthems

being sung by the Glendale High School Choir, which consists of both Armenian and non-Armenian students. Presiding over the festival were Mr. Stepan Hovagimian from the Nor Serount Cultural Association and Ms. Subha Ravindhran from the KABC-7's Eyewitness News team. Mr. Harry Unell delivered the welcoming remarks on behalf of the Armenian Independence Day Festival Committee. Glendale Mayor Ara Najarian welcomed the attendees on behalf of the City and conveyed the importance of an independent Armenia. Los Angeles City Council Member Paul Krikorian also expressed his jubilation on being able to celebrate the independence of Republic of Armenia.

In celebration of the 19th Anniversary of Armenian Independence Day, California State Assembly Member Mike Gatto presented the Nor

**Continued on page 2**

## Foreign Minister Edward Nalbandian at the UN: "Azerbaijan Represents a Threat to Regional Peace and Security."

NEW YORK -- Addressing the UN General Assembly on Saturday September 25th, Armenian Foreign Minister Edward Nalbandian accused Azerbaijan of seeking to "distort the nature of the conflict in various international platforms" and torpedo peace talks mediated by the United States, Russia and France. "That country is attempting to mislead the international community, presenting the consequences of the conflict as its causes," Nalbandian charged.

"The people of Nagorno-Karabakh exercised their right to



FM Edward Nalbandian addressing UN General Assembly

self-determination two decades ago," he said. "They fought for their right to freedom, withstanding the brutal

**Continued on page 2**

## Turkish Nationalists Planning Islamic Prayer Services In Armenian Church



Holy Virgin Cathedral in Ani

KARS -- Members of Turkey's main nationalist opposition party are reportedly planning to gather in a 11th century Armenian cathedral Friday for a politically motivated Islamic prayer that is bound to infuriate Armenians.

Turkish newspapers reported on Tuesday that authorities in the north-eastern Kars region have received a formal permission application from the local branch of the Nationalist Movement Party (MHP). They said its chairman informed dozens of local MHP activists and supporters that the prayer service will take place at the Holy Virgin Cathedral in Ani, the ruined capital of a medieval Armenian kingdom located near the city of Kars, on the existing Turkish-Armenian border.

Built in 1001 A.D. by one of the most celebrated architects of medieval Armenia, Trdat, the church was the largest building in the walled and once

